

ԹԵՄԱ՝ Էմպաթիայի/ապրումակցման/
դրսևորման ազդեցությունը կրտսեր
դպրոցականների վրա

Նարինե Պետրոսյան

հ.177 հիմնական դպրոցի դասվար

Բովանդակություն

Ներածություն.....	3
Գլուխ 1. Կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի առանձնահատկությունները	
1.1. Կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները.....	4
1.2. Կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի առանձնահատկությունները.....	9
Գլուխ 2	
2.1 Էմպաթիայի դրսևորման ազդեցությունը կրտսեր դպրոցականների միջանձնային փոխհարաբերությունների վրա.....	13
2.2 Կրտսեր դպրոցականի էմպաթիայի դրսևորման հետազոտական աշխատանք.....	18
Եզրակացություններ.....	19
Գրականության ցանկ.....	20
Հավելված	21

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Թեման կարևորվում է նրանով, որ երեխաների առողջ հոգեկան զարգացումը ներկայումս հասարակության կարևորագույն խնդիրներից է: Էմպաթիայի մեխանիզմն սկսում է գործել այն ժամանակ, երբ անհատը թափանցելով ուրիշի զգացմունքերի մեջ, կարծես թե միաձուլվում, տարալուծվում է դրանցում: Տեղի է ունենում մարդկանց փոխազդեցություն, փոխներգործություն, մեկի պրոյեկտում՝ տեղակայում մյուսի հետ: Արդյունքում մարդիկ հասնում են փոխըմբռման: Ավստրիացի անվանի հոգեբան Ալֆրեդ Ադլերը զարգացնելով իր ուսուցչի՝ Ֆրոյդի տեսությունը, գալիս է եզրահանգման, որ էմպաթիան որոշ առումով առեղծվածային՝ տիեզերական երևույթ է: «Այն,- հայտարարում է Ադլերը,- արտացոլում է մեր կապը ողջ աշխարհակառուցվածքի հետ, մարդկային ցեղին պատկանելու անքակտելիությունը»:

Թեման կարևորվում է նրանով, որ հնարավորություն է տալիս պարզել կրտսեր դպրոցականների մոտ առկա էմպաթիան և դրա դրսևորումները, որոնք ի հայտ են գալիս հասակակիցների և առհասարակ, շրջապատի հետ շփման ընթացքում: Թույլ է տալիս դրա հետ կապված վեր հանել խնդիրներ, առաջարկել լուծումներ այդ խնդիրների հաղթահարման ուղղությամբ:

Հետազոտության օբյեկտը կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մոտ առկա էմպաթիան է և դրա դրսևորումը:

Հետազոտության առարկան կրտսեր դպրոցական տարիքի երեխաներն են:

Հետազոտության նպատակն է բացահայտել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մոտ ի հայտ եկող էմպաթիան և դրա դրսևորումները հասակակիցների հետ շփման ընթացքում:

Գլուխ 1. Կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի ատանձնահատկությունները

1.1 Կրտսեր դպրոցականների տարիքային ատանձնահատկությունները

Կրտսեր դպրոցական տարիքը (6-ից 9-10 տարեկան) անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ: Մի կողմից, երեխան իմպուլսիվ է, անհանգիստ, ունի ոչ կայուն ուշադրություն, իսկ մյուս կողմից, քանի որ նրա մոտ արդեն ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է գործել, առաջնորդվելով որոշակի նպատակներով, արժեքներով, զգացմունքներով: Կրտսեր դպրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ: Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում է հայտնվում կամաձիխության ձևավորումը /պլանավորում, գործողությունների զարգացման ծրագիր, վերահսկողության իրականացում [1]: Կրտսեր դպրոցական տարիքը բնորոշվում է երեխայի կյանքում կարևոր փոփոխությունով՝ դպրոց ընդունվելով:

Ընդունվելով դպրոց՝ երեխան նոր դիրք է զբաղեցնում հասարակության մեջ, նրան առաջադրվում են պարտականություններ, կապված ուսումնական գործունեության հետ: Հարազատները, ծնողները, ուսուցիչները, և անգամ օտարները երեխայի հետ շփվում են ոչ միայն որպես յուրահատուկ մարդու, այլ նաև որպես մարդու, որը իր վրա է վերցրել սովորելու պարտավորությունը (անկախ նրանից ստիպված է անում, թե իրենց ցանկությամբ): Նախադպրոցական տարիքի ավարտին երեխան հստակ գիտակցում է, թե ինչ տեղ է զբաղեցնում հասարակության մեջ (նա նախադպրոցական է) և ինչ դեր է ստանձնելու մոտ ապագայում (աշակերտ): Մի խոսքով, նա նոր դեր է

բացահայտում սոցիալական միջավայրում, մարդկանց փոխհարաբերություններում: Մինչ այդ նա ունեցել է միջանձնային հարաբերություններում բազմաթիվ ձեռքբերումներ՝ նա կարողանում է կողմնորոշվել բարեկամա-ընտանեկան հարաբերություններում և կարողանում է զբաղեցնել համապատասխան ու ցանկալի դերը հարազատների միջավայրում: Նա կարողանում է կառուցել հարաբերություններ մեծահասակների և հասակակիցների հետ՝ ունի ինքնակառավարման ունակություն, կարողանում է իրեն ենթարկել իրադրությունը, լինել կայուն իր ցանկություններում: Նա արդեն հասկանում է, որ իր մոտիվների և արարքների գնահատումը կատարվում է ոչ միայն իր վերաբերմունքով սեփական անձի նկատմամբ («Ես լավն եմ»), այլ, առաջին հերթին նրանով, թե իր վարքը ինչպես է գնահատվում շրջապատի մարդկանց կողմից: Նրա մոտ արդեն բավականին զարգացած են ռեֆլեքսային ունակությունները: Այս տարիքում անձնավորության զարգացման ձեռքբերում է համարվում «Ես պարտավոր եմ» մոտիվի գերիշխումը «Ես ուզում եմ» մոտիվի նկատմամբ [5, էջ- 247]:

Ուսումնական գործունեությունը պահանջում է երեխայից խոսքի, ուշադրության, հիշողության, երևակայության և մտածողության զարգացման նոր ձեռքբերումներ, ստեղծում է նոր պայմաններ երեխայի անձնավորության զարգացման համար: Խոսքային և հուզական շփում: Դպրոցը երեխայի առջև դնում է խոսքի զարգացման նոր պահանջներ՝ դասի ժամին պատասխանը պետք է լինի հստակ իմաստով, արտահայտիչ, հաղորդակցման ժամանակ խոսքի կառուցվածքը պետք է համապատասխանի մշակույթում ձևավորված նորմերին: Միայն դպրոցում երեխան առանց ծնողի հուշումների, այս կամ այն իրավիճակում ստիպված է ինքնուրույն կառուցել իր խոսքը այնպես, որպեսզի կարողանա հաղորդակցման մեջ մտնել ուսուցիչների և հասակակիցների հետ:

Խոսքային մշակույթի էությունը կայանում է ոչ միայն նրանում, որ երեխան ճիշտ և տեղին կարողանա արտասանել շնորհակալական խոսքեր: Այսպիսի երեխայի նկատմամբ հասակակիցները կարող են ունենալ գերազանցության զգացում: Միայն հաղորդակցման արդյունավետ միջոցների սովորեցմամբ և օգտագործմամբ է պայմանավորված շրջապատող մարդկանց վերաբերմունքը երեխայի նկատմամբ:

Հաղորդակցումը դառնում է սոցիալական հարաբերությունների յուրահատուկ դպրոց: Երեխան դեռ անգիտակցորեն բացահայտում է իր համար հաղորդակցման տարբեր ոճերի գոյությունը:

Միայն սեփական գործունեության արդյունքում է երեխան իր համար բացահայտում հաղորդակցման ձևերի հնարավոր բոլոր տարբերակները [5, էջ 253]: Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է խաղալու պահանջմունքը: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև շարժվելու պահանջմունքը, հետևաբար, ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրանանալու կարողությանը: Ուսուցիչը նաև կարող է հմտորեն կազմակերպել երեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է և կարողանում արդյունավետ շարունակել ուսումը: Կրտսեր դպրոցականի համար նաև չափազանց կարևոր է նոր տպավորություններ ստանալու պահանջը, որի հիման վրա ձևավորվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերվու պահանջը: Այս պահանջը առաջնորդում է երեխայի զարգանալու, դրդապատճառների նոր համակարգ ձևավորելու ընթացքը: Ողջ համակարգում կարևոր դեր են խաղում սոցիալական դրդապատճառների ձևավորումը, որը ի հայտ է գալիս 2-3 դասարաններում: Աշակերտի համար կարևորվում են ուսուցչի գովասանքը, գնահատականը, ավելի ուշ հասակակիցների կարծիքը իր անձի վերաբերյալ: Այս ամենը նպաստում է երեխայի կողմից սոցիալական իր նոր դերերի գիտակցմանը, իր Ես-ի ինքնահաստատմանը: Երեխայի դրդապատճառների առաջացման, հետաքրքրության պահպանման, Ես-ի ինքնահաստատման գործընթացում չափազանց կարևորվում է ուսուցչի դերը:

Կրտսեր դպրոցականի մոտ առաջնային են նաև բարոյական դրդապատճառների ձևավորումը, ինչում կարևոր դեր են խաղում իդեալների ձևավորումը, որոնք կրում են շատ հստակ բնույթ /հիմնականում տարբեր գրքային կամ հեռուստատեսային հերոսներ/, փոփոխական են և ազդում են իրենց արտաքին կողմերով:

Կրտսեր դպրոցի առաջին տարիներին ուսուցիչը երեխայի համար միակ և անկոտրում հեղինակությունն է: Աշակերտի շփումը հիմնականում ուղղված է նրան, համադասարանցիներին նա ընդունում է ուսուցչի միջոցով, արժևորում է այն համադասարանցիներին, ում գնահատում է ուսուցիչը: Այդ պատճառով, ուսուցիչը

որպես հեղինակություն կարող է ուղղորդել երեխայի հասարակական շփումները: Հետզհետե մեծանում է հասակակիցների հետ շփվելու պահանջը, որի բավարարման ընթացքում երեխան սկսում է հասկանալ առկա կանոնները, միջանձնային շփման նրբությունները [1]:

Այս տարիքում երեխայի մոտ առաջանում են մի շարք դրական փոփոխություններ: Կրտսեր դպրոցական տարիքում կարևոր է համարվում աշխարհի նկատմամբ ճանաչողական վերաբերմունքի ձևավորումը, ուսումնական գործունեության կարողությունների յուրացումը, կազմակերպվածությունն և ինքնակարգավորումը: Ճանաչողական ոլորտի զարգացումը: Ուսումնական գործունեության ընթացքում որակապես փոխվում են իմացական բոլոր ոլորտները: Այս վերակառուցումը սկսվում է ինտելեկտուալ ոլորտի զարգացմամբ: Մտածողությունը ակնառու-գործունից անցում է կատարում բառատրամաբանականի: Ըստ Լ.Ս. Վիգոտսկու կողմից առաջադրած հիմնադրույթների՝ հոգեբանական գործառույթները զարգացում են օրինաչափորեն, այս տարիքում հիմնական գործառույթ է համարվում մտածողությունը, ինչն արտահայտվում է այլ հոգեկան ոլորտների վրա, որոնք դառնում են գիտակցված և կամաձին: Ի տարբերություն նախադպրոցականի, խնդիրներ լուծելու ընթացքում կրտսեր դպրոցականը հաշվի է առնում երևույթների այնպիսի հատկությունները, որոնք արտացոլում և հիմնվում են կոնկրետ գիտական հասկացությունների վրա: Սակայն այդ հասկացությունների ընկալման մակարդակը էականորեն կախված է ուսումնական գործունեության կազմակերպման ձևից:

Ուսումնական գործունեության ընթացքում ձևափոխվում են երեխայի հոգեկան ուշադրությունը, ընկալումը, հիշողությունը:

Առաջին օրվանից սկսած ուսումնական գործունեության ընթացքում դրվում են չափազանց մեծ պահանջներ ուշադրության վրա: Երեխան ուսուցչի հրահանգով պետք է ուշադրությունը կենտրոնացնի և պահպանի այնպիսի առարկաների վրա, որոնք գրավիչ չեն վերջինիս համար: Հիշողությունը դառնում է գիտակցված, եթե հիմնվում է նյութի տրամաբանական մշակման միջոցների վրա: Կարևոր է երեխային հասկացնել մտապահված նյութի հետ ակտիվ աշխատանքի կարևորությունը: Անհրաժեշտ է երեխային զինել մտապահման միջոցներով, որոնցից են.

- Կանխամտածված սովորեցում

- Նյութի ակտիվ մտավոր վերամշակման միջոցներ
- Նյութի մեջ իմաստային հատվածների, նրանց նշանակության առանձնացում, պլանի մշակում
- Կրկնակի ընթերցանություն մտավոր վերամշակման համար և այլն:

«Զարգացնող կրթության» կողմնակիցները քննադատում են ավանդական համակարգը նրա համար, որ այն նպաստում է, այսպես կոչված, «դպրոցական հիշողության» ձևավորմանը, ինչի հիմքում ընկած է մեխանիկական մտապահումը: [4, էջ 233-234]

Անձնավորության ձևավորումը, ինչը կապված է մոտիվների և ինքնագիտակցության հետ, շարունակում է իր զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում: Կրտսեր դպրոցականը իր գործունեության մեջ ներառում նաև ուսումը, որի արդյունքները գնահատվում են մեծահասակների կողմից: Դպրոցական առաջադիմությունից, երեխայի լավ կամ վատ սովորելու արդյունքում ստացած գնահատականից է կախված նրա անձնավորության զարգացումը: Մոտիվացիոն ոլորտը, ինչպես կարծում է Ա.Ն. Լեոնտևը, անձնավորության միջուկն է: Ի՞նչն է երեխային առաջ մղում, որո՞նք են նրա ցանկությունները: Երեխայի ուսման սկզբում, ունենալով աշակերտի ներքին դիրքորոշում, նա ցանկանում է սովորել, նույնիսկ լավ սովորել, գերազանց: Ուսուցման սոցիալական մոտիվներից, երևի թե, ամենագլխավորը բարձր գնահատականներ ստանալն է: Բարձր գնահատականը կրտսեր դպրոցականի համար այլ խրախուսանքների աղբյուր է, նրա հուզական բարեկեցության պայմանը, հպարտության առարկան: Երբ երեխան լավ է սովորում, նրան գովում են և՛ ծնողները, և՛ ուսուցիչը: Ավելին, դասարանում, որտեղ ուսուցչի դերը ոչ միայն որոշիչ, այլև միակ հեղինակությունն վայելող կարծիքն է, որի հետ բոլորը հաշվի են նստում, բարձր գնահատականը ապահովում է համապատասխան կարգավիճակ: [8, էջ 126]

Այսպիսով, կրտսեր դպրոցական տարիքը կյանքի կարևորագույն փուլերից մեկն է, որից է կախված մտածողության և անձնավորության մակարդակը, սովորելու ցանկությունը և կարողությունը, սեփական ուժերի նկատմամբ հավատը: Սոցիալական կարգավիճակի փոփոխության արդյունքում երեխան դուրս է գալիս ընտանիքի սահմաններից՝ ընդլայնելով հաղորդակցման շրջանակը:

1.2 Կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի

առանձնահատկությունները

Հուզականության տակ հասկացվում է էմոցիոնալ ապրումների ամբողջ համակարգը, ներառյալ տրամադրությունը, հույզերը, զգացմունքները: Անհատական հուզական ապրումները հանդիսանում են ազգային և հասարակական փորձի կենդանի աղբյուր, հույզերի կայունությունը և ճանաչումը տեղի է ունենում հասարակական հուզական միջուկի շնորհիվ՝ բոլորին հատուկ մշակույթի նմուշներ, հուզական ստերիոտիպեր և ռեակցիաներ նրանց նկատմամբ, որոնք Ռ. Բակումը ներկայացնում է որպես «հուզական կոմպետենտություն»: [7, էջ 707-709]

Հույզերը դրանք այն է, ինչ ապրվում է որպես զգացմունք, որը մոտիվացնում, կազմակերպում և ուղղորդում է ընկալումը, մտածողություն և գործունեությունը: Հույզերը մոտիվացնում են, նրանք մոբիլիզացնում են էներգիան, և այդ էներգիան որոշ դեպքերում սուբյեկտի կողմից ընկալվում է որպես գործողության իրականացման միտում: Հույզերը վերահսկում են մարդու ֆիզիակական ակտիվությունը և մտածողությունը՝ ուղղորդելով այն որոշակի ուղղությամբ: Հույզերը կարգավորում են, կամ ավելի ճիշտ ասած, գտում են մեր ընկալումը:

Կրտսեր դպրոցականների մոտ հիմնական են համարվում հետաքրքրության, ուրախության, զարմանքի, տխրության, զայրուրթի, զզվանքի և վախի հույզերը:

Դպրոց հաճախելուց հետո փոխվում է երեխայի հուզական ոլորտը, ինչը պայմանավորված է գործունեության բովանդակության ընդլայնման հետ և հույզեր առաջացնող օբյեկտների թվի ավելացմամբ: Այն գրգռիչները, որոնք հուզական ազդակ են առաջացնում նախադպրոցական տարիքի երեխաների մոտ, կրտսեր դպրոցականների մոտ կարող են չառաջացնել: Չնայած որ կրտսեր դպրոցականը բուն արձագանքում է այն իրադարձություններին, որոնք ազդում են նրանց վրա, նրա մոտ առաջացնում է անցանկալի հուզական ռեակցիաների կամային ջանքերի ճնշման ունակություն: Ինչի արդյունքում դիտվում է ապրման տարամիտում ինչպես մի, այնպես էլ մյուս ուղղությամբ: Նա կարող է չարտահայտել առաջացած հույզը, ինչպես նաև արտահայտել հույզը, որը իրականում չի ապրվել: Կրտսեր դպրոցականների մոտ առաջանում են ապրումակցելու ունակություն և դրամատիկական կոնֆլիկտների ընկալման ժամանակ:

Հաճախ մանկական ընկերությունը ընդհատվում է, երբ ընկերները տեղափոխվում են այլ դպրոց կամ տեղափոխվում են այլ քաղաք: Այս դեպքում երկուսն էլ ունենում են կորուստի զգացում, թախիծի զգացում, մինչև որ կգտնեն նոր ընկերներ: Երբեմն ընկերությունը ընդհատվում է նոր հետաքրքրությունների ձեռք բերման պատճառով, որի արդյունքում երեխաները փնտրում են նոր գուզընկերների, որոնք կկարողանան բավարարել իրենց պահանջմունքները: Այդ դեպքում վտանգ է առաջանում այսպիսի երեխաների սոցիալական ադապտացման համար: Վարքի նոր կանոնների ու նորմերի յուրացումը էական փոփոխությունների է ենթարկում կրտսեր դպրոցականների հուզական կյանքը: Շատերի մոտ այդ փոփոխությունները, որպես կանոն, տեղի են ունենում առանց բացասական ապրումների և հենց իրենց՝ երեխաների կողմից էլ ընկալվում են որպես դրական երևույթ: Օրինակ՝ նրանք ուրախանում են համադասարանցիների հետ հաստատվող բարեկամական նոր կապերի համար, պատասխանատու վերաբերմունք են դրսևորում դպրոցում իրենց վարքին ներկայացվող պահանջների նկատմամբ: Ուսումնական գործունեության ընթացքում, հոգեկան այլ պրոցեսների նման, փոխվում է նաև երեխաների հույզերի բնույթը: Այդ գործունեությունը կապված է համատեղ գործողություններին ներկայացվող խիստ պահանջների համակարգի, գիտակցված կարգապահության, կամաձին ուշադրության և հիշողության հետ: Այս ամենը ազդում է երեխաների հույզերի վրա: Կրտսեր դպրոցական հասակի ողջ ընթացքում կարելի է նկատել հույզերի դրսևորման գործում զսպվածություն և գիտակցվածության ուժեղացում հուզական վիճակների կայունության աճ: Կրտսեր դպրոցականները արդեն կարողանում են կառավարել իրենց տրամադրությունը, իսկ երբեմն նույնիսկ քողարկել դրանք: Կրտսեր դպրոցականները ավելի հավասարակշռված են, քան նախադպրոցականներն ու դեռահասները: Նրանց հատուկ են տևական, կայուն, ուրախ և աշխույժ տրամադրությունները: Սակայն որոշ երեխաների մոտ նկատվում են բացասական աֆեկտիվ վիճակներ: Դրանց գլխավոր պատճառը հավակնությունների մակարդակի, դրանց բավարարման հնարավորությունների միջև անհամապատասխանությունն է: Եթե այդ անհամապատասխանությունը տևական է և երեխան միջոցներ չի գտնում դրա հաղթահարման կամ թուլացման համար, ապա բացասական ապրումները կարող են պոռթկալ չար ու կատաղի արտահայտությունների և գործողությունների ձևով: [2, էջ-125]

Իրենց ուսումնական գործունեության գնահատականը նրանք համարում են ամբողջ անձի գնահատական: Բացասական գնահատականները, դիտողությունները նրանց մոտ առաջացնում են տագնապայնություն, անհարմարության վիճակ, ինչի հետևանքով աշակերտներից շատերը դառնում են պասիվ: Երեխայի հուզական վիճակից կախված վարքի անկայունությունը դժվարացնում է ինչպես մանկավարժի հետ հարաբերությունները, այնպես էլ դասի ժամանակ երեխաների կոլեկտիվ աշխատանքը: Վեց տարեկան երեխաներին ուսուցանելը դժվար է, ընդ որում այսպիսի ուսուցումը պետք է հաշվի առնի նրանց զարգացման առանձնահատկությունը: Վեց տարեկան երեխաների զարգացման տարբեր կողմերի հետազոտությունները ցույց են տվել, որ նրանք իրենց հանգիստ, հարմարավետ, ինքնավստահ են զգում մանկապարտեզի նախապատրաստական խմբերում ուսուցանման ժամանակ՝ ի տարբերություն դպրոցի առաջին դասարանի: Գլխավոր պատճառն այն է, որ մանկապարտեզի կենսառիթմը, մեծահասակի և հասակակիցների հետ շփման ոճը, առավել համապատասխանում է երեխայի հոգեկան զարգացման մակարդակին: Իր սոցիալական անկայունության, նոր պայմաններին և հարաբերություններին հարմարման դժվարությունների պատճառով վեց տարեկան երեխան կարիք ունի անմիջական հուզական կոնտակտի, բայց դպրոցական ուսուցման ֆորմալիզացված պայմաններում այդ պահանջմունքը չի բավարարվում: Իսկ ի՞նչ է տեղի ունենում երեխայի հետ, եթե նա, այնուամենայնիվ հայտնվում է դպրոցական ուսուցման ֆորմալիզացված համակարգի մեջ, որում բավարար չափով հաշվի չի առնվում նրա տարիքային առանձնահատկությունները: Ինչպես ցույց են տվել դպրոցում իրականացված կոմպլեքս հետազոտությունները, անբարենպաստ պայմաններում հաճախ վատանում է երեխաների առողջական վիճակը, կարող է քաշը պակասել, նվազել հեմոգլոբինի քանակն արյան մեջ, իջնում է տեսողության սրությունը, ի հայտ են գալիս գլխացավեր: Ընդհանուր ինքնազգացողության վատացման պատճառով՝ նվազում է երեխայի ոչ այդքան բարձր աշխատունակությունը, ինչը բացասաբար է ազդում ուսման վրա: Առանձին դեպքերում առաջանում են ներոզներ, դպրոցական դեզադապտացիա, նրանք լարված են ֆիզիկապես և հոգեպես: Հարաբերականորեն բարենպաստ պայմաններում հոգեբանական լարվածությունն աստիճանաբար նվազում է 1,5-2 ամսից: Առավել խիստ պայմաններում այն պահպանվում է՝ առաջացնելով երկրորդային էֆեկտներ հոգեբանական առումներով [9, էջ 8-9]

Այսպիսով, դպրոց ընդունվելով փոխվում է կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի ուղղվածությունը, կապված գործունեության փոփոխության և հուզական օբյեկտների շրջանակի ընդլայնման հետ: Այն հուզական ազդակները, որոնք ռեակցիա էին առաջացնում նախադպրոցականների մոտ, կրտսեր դպրոցականի մոտ արդեն չեն գործում: Այս տարիքային շրջանի կարևոր առանձնահատկությունը համարվում է անսահման վստահությունը մեծահասակի նկատմամբ (գլխավորապես ուսուցչի), նրան ենթարկվելը և կրկնօրինակելը: Հաջորդ առանձնահատկությունը երեխաների կողմից հաջողության ձգտման դիրքորոշումն է և վարքի կամային կառավարումը: Ինքնագնահատականը և խրախուսման ձգտումը մեծ դեր են խաղում կրտսեր դպրոցականի կյանքում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն աշակերտները, որոնք ունեցել են հաջողության հասնելու համար ուժեղ մոտիվացիա, նրանց մոտ առկա է եղել ակտիվ կամ չափավոր բարձր ինքնագնահատական: Հետևաբար, տարիքը, որը համապատասխանում է դպրոցական ուսուցման 1-4 դասարաններին, կարելի է դիտարկել որպես երեխայի անձնի բնութագրի առաջացման և ամրապնդման կարևորագույն շրջան, որը դառնալով բավականաչափ կայուն, որոշում է նրա հուզական վիճակը գործունեության տարբեր տեսակների ընթացքում:

Գլուխ 2

2.1 Էմպաթիայի դրսևորման ազդեցությունը կրտսեր դպրոցականների միջանձնային փոխհարաբերությունների վրա

«Էմպաթիան» (հունարեն՝ Empathos) նշանակում է ուժեղ, խոր տառապանքի աստիճանի հասնող զգացմունք, երկու անձնավորության միջև առաջ եկող հատուկ հարաբերություններ: Այս եզրը շրջանառության մեջ է դրել Զիգմունդ Ֆրոյդը, որի օգնությամբ անվանի հոգեբանը նկարագրում է մարդու՝ իրեն ուրիշի տեղը դնելու և ապրումակցելու հատկություն: Էմպաթիան այն մեխանիզմն է, որը նպաստում է մարդկանց միջև հուզական կապերի առաջացմանը, հետևաբար՝ հաղորդակցության կայացմանն ու զարգացմանը: Վերլուծելով էմպաթիայի երևույթը էմոցիոնալ՝ զգայական տեսանկյունից՝ Ի. Անդրեևան գտնում է, որ էմպաթիայի ամբողջական գործընթացը բաղկացած է շղթայի երեք օղակներից, որոնք են ապրումակցումը, կարեկցանքը և ներքին աջակցությունը: Յուրաքանչյուր օղակ խաղում է իր դերը: Ապրումակցումը, որի հիմքում ընկած է իդենտիֆիկացիան՝ նույնացումը, դիմացինի ապրումների արձագանքն է: Էմպաթիան ենթադրում է զարգացած ունակությունների առակայություն դեպի տարբեր էմոցիաներ և ինֆորմացիայի մշակում, որոնք պարունակվում են այդ էմոցիաների մեջ: Իսկ ամերիկյան հայտնի սոցիալական հոգեբան Ս. Աշը 1952 թվականին ներկայացրեց նշված շղթայի կրճատված տարբերակը՝ առաջարկելով առանձնացնել էմպաթիայի երկու տեսակ՝ ապրումակցում և կարեկցանք (ցավակցություն): Նախ, ապրումակցման մասին: Այսպես, Ա անհատի ապրումակցումը Բ-ի հետ նշանակում է հետևյալը. Ա-ն հետևում է Բ-ի վարքին, ընկալում նրա ապրումների արտաքին դրսևորումները ու, հիմնականում, ենթագիտակցորեն, այսինքն՝ առանց իրեն հաշիվ տալու մեկնաբանում է այդ ազդանշանները և սկսում է ապրել այնպիսի հույզեր ու հոգեվիճակներ, ինչպիսիք ապրում է նրա սոցիալական ընկալման օբյեկտը: Նրանց միջև առաջ է գալիս հատուկ տիպի հուզական կապ, և Բ-ն Ա-ի համար դառնում է էմպաթիայի օբյեկտ: Իսկ ինքն այս կապի մեջ հանդես է գալիս որպես էմպաթիայի սուբյեկտ: Էմպաթիայի երկրորդ տեսակը, ըստ Ս. Աշի, կարեկցանքն է (ցավակցություն), երևույթ, երբ սուբյեկտն

ընկալում է օբյեկտին, հասկանում է նրա վիճակն ու ապրումները, բայց դրան զուգահեռ նա ունի իր՝ սեփական ապրումները, որոնք նրա համար առաջնային են: Էմպաթիայի այս երկու տեսակների գոյության և տարբերությունների հստակ ըմբռնումը կարևոր նշանակություն ունի սոցիալական փոխներգործության համար: Ընդ որում՝ զարգացման ընթացքում, մի ամբողջ շարք ժառանգական ու սոցիալական գործոններից կախված, ձևավորվում են էմպաթիայի ունակության տարբեր մակարդակներ ունեցող անձնավորություններ: Սոցիալական հոգեբանության բնագավառում ներկայումս առանձնացնում են հատուկ՝ էմպաթիայի բարձր աստիճան ունեցող անձնավորության տիպ: Դա այնպիսի մարդ է, որը հեշտությամբ է հասկանում ուրիշի հուզական վիճակը, ապրումակցում է նրան կամ միայն կարեկցում ու ցավակցում՝ չմոռանալով իր ապրումները: Այս տիպի մարդիկ, ապրումակցելով հանդերձ, մնում են պասսիվ: Դիմացինին օգնելու մոտիվացիան նրանցում կամ թույլ է, կամ բացակայում է: Նրանք սոցիալական օգտակար, օժանդակող գործողությունների չեն դիմում: Հարկ է նշել նաև, որ հոգեբանական վերջին նվաճումների ենթատեքստում ավելի հաճախ է հնչում ոչ վերբալ (ժեստերի կամ մարմնի լեզվի) հաղորդակցության դերը էմպաթիայի գործընթացում: Ամերիկացի հետազոտող Ջեյմս Բորգը, օրինակ, գտնում է, որ մարդկանց հաղորդակցությունը, այդ թվում նաև էմպաթիայի գործընթացը տեղի են ունենում զգացմունքների երեք ասպեկտների միջոցով՝ ապրումակցում, զգայունություն, դյուրըմբռնում: Սակայն դիմացինի այդ զգացմունքներին անձը կարող է հասու լինել միայն ոչ վերբալ՝ ոչ խոսքային հաղորդակցության օգնությամբ: Ջ. Բորգի կարծիքով մարդիկ հազվադեպ են բացահայտում իրենց ապրումները միայն խոսքերով, և մենք ընկալում ենք նրանց զգացմունքները հիմնականում ժեստերի, դիմախառի և ինտոնացիայի միջոցով:

Էմպաթիան իդենտիֆիկացիայի՝ նույնացման յուրահատուկ արտահայտություն է: Էմպաթիան ի հայտ է գալիս վաղ հասակում, երբ երեխան սկսում է իրեն հասկանալ և հաղորդակցվել մարդկանց հետ:

20-րդ դարի ամերիկացի ֆանտաստ գրող Բրեդ Բերին իր ֆանտաստիկ պատումներից մեկում հանճարեղորեն կռահել էր, որ այն անհատը, ով որպես անձ դեռևս ձեռք չէր բերել իր ինքնությունը, իր ես-ը, ես-ի սահմանները, հեշտությամբ կերպարանափոխվում և դառնում էր դիմացինի բացարձակ կրկնօրինակը, սակայն երբ այդ հերոսի շուրջ հավաքվում են բոլոր այն անձինք, ում հետ նա կրկնօրինակվել և

նույնականացել էր, նա հօդս է ցնդում, իսպառ անհետանում է և դադարում է գոյություն ունենալ: Ոչ ոք չի կարող պնդել, որ գիտի, թե ինչպես է ծագում զգացմունքը, հույզերը՝ մասնավորապես ապրումակցումը: Չարմանալին այն է, որ մենք բոլորս առօրյայում այդ հույզերը ճանաչում ենք, ինչպես մեզ շրջապատող իրերն ու առարկաները: Բայց երբեք չենք կարող իմանալ, թե որտեղից են դրանք գալիս, դրանց ծագման աղբյուրը: Ապրումակցման (եմպաթիայի) արդեն իսկ կայացած ձևերը, ընդհանուր առմամբ, պատրանք են ներշնչում, որ մարդն իր հույզերով կարող է նույնականանալ, միաձուլվել դիմացինի հետ, դառնալ մեկ ամբողջություն, այսինքն դա պատրանք է, քանի որ սուբյեկտն ի վերջո ունի իր ինքնությունը, ես-ը և այդ ես-ի սահմանները, մինչդեռ հոգեկանի ուսումնասիրության գործիքակազմի ստեղծման հիմքով միայն հնարավոր է պատասխանել հետևյալ հարցերին՝ որտե՞ղ է գտնվում ես-ը և ո՞րն է մենք-ի տիրույթ:

Միջանձնային հարաբերությունը մարդկանց միջև փոխադարձ կապերի սուբյեկտիվ ապրումներ են, որոնք օբյեկտիվորեն դրսևորվում են մարդկանց փոխազդեցությունների բնույթում և եղանակներում՝ նրանց համատեղ գործունեության ընթացքում: Դա դիրքորոշումների, կողմնորոշումների, սպասումների համակարգ է, որի միջոցով մարդիկ ընկալում և գնահատում են միմյանց:

Միջանձնային հարաբերությունների համատեքստում ուշադրության է արժանի Վ. Շուտցի ինտերպերսոնալ (միջանձնային) հարաբերությունների տեսությունը, համաձայն որի միջանձնային հարաբերությունները խմբում պայմանավորված են անձի անցյալի փորձով, որի միջոցով անձը կառուցում է իր հարաբերություններն ուրիշների հետ: Դրանից կախված՝ միջանձնային հարաբերություններում անձը կարող է լինել սուբ անձնային, երբ նա խուսափում է բաց հարաբերություններից և միջանձնային հարաբերություններում պահպանում է վերևից ներքև եղանակը՝ խուսափելով մտերմությունից, և գերանձնային, երբ անձն իր զգացմունքները վստահում է և ձգտում է դուր գալ բոլորին, անձնային. անձն աղեկվատ է զգում իրեն, և իրադրությունից կախված՝ կարող է լինել բավականաչափ մտերիմ, բաց, կամ պահպանել հեռավորություն:

Ամերիկացի անվանի հոգեբան Գ. Սալիվանը, գտնում է, որ անձին կարելի է ուսումնասիրել միայն միջանձնային հարաբերությունների համակարգում: Նա միջանձնային հարաբերություններից անձի մեկուսացվածությունը համարում է ես ի կորուստ: Անձը չի կարող մեկուսացվել միջանձնային հարաբերություններից, որում

գոյություն ունի:

Միջանձնային հարաբերությունների զարգացնող դերի և դրանցում անհատական առանձնահատկությունների կարևորության մասին առաջիններից խոսել է Տ. Շիրուտանին: Հեղինակը գտնում է, որ միջանձնային հարաբերությունը փոխադարձ կողմնորոշում է, որը զարգացնում և բյուրեղացնում է երկարաժամկետ փոխհարաբերության մեջ գտնվող անձանց: Այդ փոխհարաբերությունների բնույթը կախված է անձնային հատկանիշներից և այն հանգամանքից, թե անձը ինչ պատասխանատվություն է կրում խմբում:

Համաձայն Գ. Ա. Կովալյովի կողմից տրված դասակարգման՝ միջանձնային հարաբերություններում այլ անձն ընկալվում է որպես ազդեցության առարկա: Նա առանձնացնում է միջանձնային հարաբերությունների երեք մոդելներ՝ օբյեկտային (կամ իմպերատիվ), սուբյեկտային (մանիպուլյատիվ), սուբյեկտ-սուբյեկտային (ծավալվող, զարգացող): Ռուսական հոգեբանական մտքի ներկայացուցիչներ Յա. Կոլումինսկին և Ն.Պլեսկաչևան հիմնախնդիրը դիտարկում են տարիքային փոփոխությունների համատեքստում: Յա. Կոլումինսկին նույնացնում է փոխազդեցություն և միջանձնային հարաբերություն հասկացությունները, նշելով, որ փոխազդեցությունը անպայման, ուղղակի միջանձնային հարաբերություն է: Միջանձնային հարաբերությունների լուսաբանմանն է միտված Ա. Վ. Պետրովսկու տեսությունը, որտեղ կենտրոնական նշանակություն է տրվում գործունեությանը: Տեսության հիմքում ընկած է այն գաղափարը, որ յուրաքանչյուր զարգացած խմբում միջանձնային հարաբերությունները միջնորդավորված են տվյալ խմբի համար նշանակալի գործունեության բովանդակությամբ և խնդիրներով:

Ս. Ի. Լիսինայի կողմից մշակված հարաբերությունների գենեզիսի հիմնադրությունում հիմնական նշանակությունը տրվում է հաղորդակցական գործունեությանը, որտեղ քննարկվում է ոչ թե շփման վարքային նկարագիրը, այլ ներքին հոգեբանական կողմը, այսինքն՝ անձի շփման պահանջմունքները և դրդապատճառները:

Ե. Պ. Իլյինը սահմանում է միջանձնային հարաբերությունն որպես միմյանց նկատմամբ վերաբերմունք: Միջանձնային հարաբերությունները հաճախ ուղեկցվում են հույզերով՝ արտահայտելով միջանձնային հարաբերությունների մեջ ներգրավված անձանց ներաշխարհը:

Ն. Ն. Օբոզովը միջանձնային հարաբերությունը բնորոշում է նաև որպես մարդկանց փոխադարձ դիրքորոշում: Համաձայն Ն. Ն. Օբոզովի՝ միջանձնային հարաբերություններում էմպատիան դրսևորվում է 3 մակարդակում՝ կոգնիտիվ, հուզական, վարքագծային: Գ. Մ. Անդրեևայի աշխատությունում միջանձնային հարաբերությունը առավելապես դիտարկվում է որպես խմբի հոգեբանական մթնոլորտ: Ըստ հեղինակի՝ միջանձնային հարաբերությունները ծագում և դրսևորվում են միմյանց նկատմամբ որոշակի զգացմունքների հիման վրա: Ըստ Ս. Վ. Դուխնովսկու միջանձնային հարաբերությունն ենթադրում է անձանց միջև հարաբերություն, հենց անձնային բաղադրիչը դրանում գերակշռող է: Այսպիսով, սահմանելով միջանձնային հարաբերությունները՝ հոգեբանների մի մասը միջանձնային հարաբերություններում ընդգծում են հուզական բաղադրիչը՝ ապրումակցում (էմպաթիա), գրավչություն (ատտրակցիա), վերաբերմունք, իսկ մյուսները՝ համատեղ գործունեության բաղադրիչը:


2.2 Կրտսեր դպրոցականի էմպաթիայի դրսևորման հետազոտական աշխատանք

Հետազոտությունը իրականացվել է 7-10 տարեկան թվով 20 (10ար., 10իգ.) աշակերտների հետ: Ելնելով առաջադրված նպատակի առանձնահատկություններից՝ ընտրվել է հետևյալ մեթոդիկան.

1. Էմպաթիայի (ապրումակցման) ախտորոշման մեթոդիկա:

Մեթոդիկան նախատեսված է էմպաթիայի մակարդակի բացահայտման համար: Փորձերը կատարվել են դասասենյակային պայմաններում, յուրաքանչյուր նստարանին նստած է եղել մեկ հոգի:

Փորձարկվողների խմբում (7-10տ.) բացահայտվել է հետևյալ օրինաչափությունը՝ փորձարկվողների 38%-ը ունի էմպաթիայի ցածր, 62%-ը՝ բարձր մակարդակ:



Եզրակացություններ

- Էմպաթիան հատկապես հստակորեն է դրսևորվում մարդկանց անմիջական փոխհարաբերություններում: Այն հաղորդակցման ընդունակության անհրաժեշտ բաղադրիչն է և առանց էմպաթիա չկա մարդկանց լիարժեք շփում:
- Էմպաթիայի մեթոդի (բնականաբար՝ էմպաթիան նաև կարողություն է) կիրառումը նպաստում է սովորողի մի խումբ կարողությունների՝
 1. իրականության երեք ժամանակային փուլերը՝ անցյալ, ներկա, ապագա, և նրանց ոչ վեկտորալ կապը հասկանալու
 2. հաղորդակցվելու և համագործակցելու, այդ թվում՝ միջքաղաքակրթական և միջմշակութային ոլորտներում

Գրականության ցանկ

- 1 Բալլան Ա.Ա Մանկավարժական հոգեբանության հարցեր - Երևան: Լույս, 1983:
- 2 Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ Ընդհանուր հոգեբանություն Լույս հրատարակչություն Երևան-1977, էջ-125
- 3 Изард К. Э. “Психология эмоций”. СПб, Питер, 2006г., стр 464
- 4 Каримова Н. И. “Телевидение как политико-коммуникативный институт фор мирования имиджа российских политиков” // "Казанская наука", 2010, № 8, էջ 848-851:
- 5 Кулагина И.Ю. “Возрастная психология: развитие ребенка от рождения до 17 лет” / Ун т Рос. акад. образования. -- 5-е изд. - М. : Изд-во УРАО, 1999. – 175
- 6 Смирнова Е.О. и Лаврентьева Т.В. “Как телевидение влияет на наших на детей”
- 7 Пацлаф Р. Застывший взгляд. М.: Evidentis, 2003. 224 с.
- 8 Флинт Ж. Л. “Тележизор и наши дети” Серия «в помощь родителям» Таруса, 2012 г
- 9 bd.fom.ru

Հավելված

Նպատակը Այս աշխատանքի նպատակն է Ա. Մեհրաբյանի և Ն. Էպշտեյնի հարցարանի օգնությամբ տիրապետել էմպաթիայի ախտորոշման մեթոդին: Հարցարանը պարունակում է 10 դատողություն, հետազոտվողը պետք է գնահատի դրանցից յուրաքանչյուրի հետ իր համաձայնության աստիճանը:

Ազգանուն, անուն,

հայրանուն _____

սեռ _____ տարիք _____ ամսաթիվ _____

Հարցարան

1. Դու տխրում ես, երբ տեսնում ես, որ անձանոթ մարդն իրեն միայնակ է զգում օտար մարդկանց միջավայրում:
2. Դու սրտիդ մոտ ես ընդունում ընկերներիդ պրոբլեմները:
3. Քո տրամադրության վրա մեծ ազդեցություն են ունենում շրջապատի մարդիկ:
4. Երբ տեսնում ես, որ ինչ-որ մեկի հետ վատ են վարվում, դու միշտ զայրանում ես:
5. Քեզ համար հաճելի է դիտել, թե ինչպես են ընկերներդ նվերներ ստանում:
6. Երբ տեսնում ես լաց լինող մարդ, ինքդ էլ ես տխրում:
7. Դու շատ ես վշտանում, երբ տեսնում ես կենդանիների տանջանքները:
8. Շատ ես վշտանում, երբ տեսնում ես անօգնական ծեր մարդկանց:
9. Դու կարող ես անտարբեր մնալ շրջապատի ցանկացած հուզմունքի նկատմամբ:
10. Կարծում ես փոքր երեխաները լաց են լինում առանց պատճառի: